ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԻՎ/13/22

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 24 մայիսի 2022թ.

Կոռուպցիայի կանխարգելման Հանձնաժողովը, կազմով՝ Հայկուհի Հարությունյանի, Արամայիս Փաշինյանի, Նարեկ Համբարձումյանի, Մարիամ Գալստյանի (այսուհետ՝ Հանձնաժողով), 2022 թվականի մայիսի 24-ին քննելով ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի դատավոր Սերժիկ Սերգեյի Ավետիսյանի կողմից հայտարարագրման ենթակա տվյալները «Հայտարարատու պաշտոնատար անձի 2020 թվականի գույքի, եկամուտների և շահերի» հայտարարագրում ոչ ամբողջական ներկայացնելու փաստի առթիվ 2022 թվականի մայիսի 12-ի թիվ ՎԻՎ 13/22 որոշմամբ հարուցված վարչական իրավախախտման վերաբերյալ գործը

ՊԱՐԶԵՑ

1. **Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործի վարույթի նախապատմությունը.**

1.1 Հանձնաժողովը, 2020 թվականի մարտի 25-ին ընդունված «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-199-Ն օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝

352

«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 25-րդ հոդվածով սահմանված կարգով, իրականացնելով դատավորների հայտարարագրերի վերլուծություն, պարզել է, որ ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի դատավոր Սերժիկ Սերգեյի Ավետիսյանի կողմից 2021 թվականի մայիսի 28-ին ներկայացրած «Հայտարարատու պաշտոնատար անձի 2020 թվականի գույքի, եկամուտների և շահերի» հայտարարագրում (այսուհետ՝ Հայտարարագիր) «Դ.2 «Ներկայացվածությունը առևտրային կազմակերպությունների կառավարման, վարչական կամ վերահսկողական մարմիններում» բաժնում վերջինս չի հայտարարագրել իր հետ համատեղ բնակվող չափահաս անձ՝ Էդիտա Սերժիկի Ավետիսյանի «ԹԻ ՍԻ ՌԻԵԼԹԻ» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն հանդիսանալու մասին տվյալը, մինչդեռ ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունից ստացված տվյալների համաձայն՝ 2020 թվականի մարտի 10-ից Սերժիկ Սերգեյի Ավետիսյանի հետ համատեղ բնակվող չափահաս անձ Էդիտա Սերժիկի Ավետիսյանը հանդիսանում է «ԹԻ ՍԻ ՌԻԵԼԹԻ» ՓԲԸ-ի գլխավոր տնօրենը (ՀՎՀՀ 02824284): Վերոնշյալի առնչությամբ 2022 թվականի մայիսի 12-ին հարուցվել է թիվ ՎԻՎ 13/22 վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը:

1.2 2022 թվականի մայիսի 12-ին Սերժիկ Ավետիսյանը հրավիրվել է Հանձնաժողով, վերջինիս բացատրվել են «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 267-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքներն ու պարտականությունները, և նրա մասնակցությամբ կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ 13/22 արձանագրությունը՝ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված առերևույթ իրավախախտման հատկանիշներով:

1.3 Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությունը նշանակվել է 2022 թվականի մայիսի 24-ին, որն իրականացվել է Սերժիկ Ավետիսյանի մասնակցությամբ: Վերջինս Հանձնաժողովին ներկայացրեց գրավոր արձանագրված խախտման բնույթի առնչությամբ:

353

2. Վարույթի մասնակցի բացատրությունը.

Սերժիկ Ավետիսյանը 2022 թվականի մայիսի 18-ին թիվ Մ-2033-2022 գրությամբ ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է, որ Հայտարարագրում առկա ոչ ամբողջական ներկայացված տվյալը իր կողմից հայտարարագիրը լրացնելիս անուշադրության պատճառով է առաջացել: Իր աղջիկը՝ Էդիտա Ավետիսյանը իր Հայտարարագրում նշել է կազմակերպության անվանումը, որտեղ աշխատում է և պահանջվող այլ տվյալները: Հայտնել է, որ առկա բացթողումը կրում է ձևական բնույթ, չի կարող հանգեցնել որևէ վնասակար հետևանքի: Անդրադառնալով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասին, Սերժիկ Ավետիսյանը նշել է, որ այն դեպքերում, երբ անձի արարքով վնասակար հետևանք չի առաջացել, և գործի փաստական տվյալներով հաստատված է, որ իրավախախտը նպատակ չի ունեցել վնասակար հետևանք պատճառել, վարույթը պետք է կարճվի՝ արարքի նվազ կարևոր լինելու պատճառաբանությամբ:

Վերոնշյալի հիման վրա Սերժիկ Ավետիսյանը խնդրել է իր նկատմամբ հարուցված վարչական և կարգապահական վարույթները կարճել՝ արարքում համապատասխան հիմքի բացակայության պատճառաբանությամբ:

3. Գործի քննության ընթացքում հաստատված հանգամանքները.

Հանձնաժողովն, ուսումնասիրելով և վերլուծելով թիվ ՎԻՎ 13/22 գործում առկա նյութերը, կատարելով գործի հանգամանքների համակողմանի ուսումնասիրություն, հաստատված է համարում հետևյալը.

Սերժիկ Ավետիսյանը Հայտարարագրում՝ «Դ.2 «Ներկայացվածությունը առևտրային կազմակերպությունների կառավարման, վարչական կամ վերահսկողական մարմիններում» բաժնում, չի ներկայացրել իր հետ համատեղ բնակվող չափահաս անձ՝ Էդիտա Սերժիկի Ավետիսյանի «ԹԻ ՍԻ ՌԻԵԼԹԻ» ՓԲԸ-ի (ՀՎՀՀ 02824284) գլխավոր տնօրեն հանդիսանալու մասին տվյալը, մինչդեռ ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունից ստացված տվյալների համաձայն՝ 2020 թվականի մարտի 10-ից Սերժիկ Սերգեյի Ավետիսյանի

359

հետ համատեղ բնակվող չափահաս անձ Էդիտա Սերժիկի Ավետիսյանը հանդիսանում է «ԹԻ ՍԻ ՌԻԵԼԹԻ» ՓԲԸ-ի գլխավոր տնօրենը:

4. Որոշումն ընդունելու իրավական հիմքերը, հիմնավորումները և պատճառաբանությունը.

4.1 Սերժիկ Ավետիսյանը իրավահարաբերության պահին գործող խմբագրությամբ «Հանրային ծառայության մասին» օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 34-րդ հոդվածի համաձայն հանդիսանում է գույքի, եկամուտների և շահերի հայտարարագրման պարտականություն ունեցող անձ:

4.2 Օրենքի 42-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Հայտարարագրի՝ «Ներկայացվածությունը առևտրային կազմակերպությունների կառավարման, վարչական կամ վերահսկողական մարմիններում» բաժնում նշվում են այն կազմակերպության անվանումը, հարկ վճարողի հաշվառման համարը, հասցեն, որի կառավարման, վարչական կամ վերահսկողական մարմիններում ներկայացված է հայտարարատու պաշտոնատար անձը և (կամ) նրա ընտանիքի անդամները, ինչպես նաև այդ կազմակերպությունում անձի կարգավիճակը:

4.3 Օրենքի 34-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի չափահաս անդամները համարվում են հայտարարագիր *ներկայացնելու պարտականություն ունեցող անձ և հայտարարատու պաշտոնատար անձի հայտարարագրում լրացնում են իրենց գույքի, եկամուտների և ծախսերի վերաբերյալ տվյալները, պատասխանատու են դրանց իսկության համա*ր:

4.4 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը քննում և լուծում է հայտարարագրմանն առնչվող խախտումների վերաբերյալ գործեր:

4.5 «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի 244.17-րդ հոդվածի համաձայն՝ օրենսգրքի 169.28-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր է նշանակում Հանձնաժողովը:

4.6 «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքով 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինը (պաշտոնատար անձը) **ապացույցները գնահատում է**

355

իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա, ղեկավարվելով օրենքով և իրավագիտակցությամբ:

4.7 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, ***այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:***

4.8 «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 21-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն՝ եթե կատարված վարչական իրավախախտումը նվազ նշանակություն ունի, գործը վճռելու համար լիազորված մարմինը (պաշտոնատար անձը) կարող է խախտողին ազատել վարչական պատասխանատվությունից և բավարարվել բանավոր դիտողությամբ:

Հանձնաժողովը, համադրելով գործում առկա փաստական հանգամանքները, դրանց նկատմամբ կիրառելի իրավական նորմերի պահանջների հետ, հաստատված է համարում, որ անզգուշությամբ կատարվել է խախտում, այն է՝

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի դատավոր Սերժիկ Ավետիսյանը «Հայտարարատու պաշտոնատար անձի 2020 թվականի գույքի, եկամուտների և շահերի» հայտարարագրում՝ «Դ.2 «Ներկայացվածությունը առևտրային կազմակերպությունների կառավարման, վարչական կամ վերահսկողական մարմիններում» բաժնում անզգուշությամբ չի ներկայացրել իր հետ համատեղ բնակվող չափահաս անձ՝ Էդիտա Սերժիկի Ավետիսյանի «ԹԻ ՍԻ ՌԻԵԼԹԻ» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն հանդիսանալու մասին տվյալը, որով խախտել է Օրենքի 42-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջն առ այն, որ Հայտարարագրի՝ «Ներկայացվածությունը առևտրային կազմակերպությունների կառավարման, վարչական կամ վերահսկողական մարմիններում» բաժնում նշվում են այն կազմակերպության անվանումը, հարկ վճարողի հաշվառման համարը, հասցեն, որի կառավարման, վարչական կամ վերահսկողական մարմիններում ներկայացված է հայտարարատու պաշտոնատար անձը և (կամ) նրա ընտանիքի անդամները, ինչպես նաև այդ կազմակերպությունում

356

անձի կարգավիճակը: Նշված արարքը հանդիսանում է վարչական զանցանք՝ հիմք ընդունելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին պարբերությամբ սահմանված իրավակարգավորումը (հայտարարատուի կողմից հայտարարագրում անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ ներկայացնելը):

Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 21-րդ հոդվածը սահմանել է, որ եթե կատարված վարչական իրավախախտումը նվազ նշանակություն ունի, գործը վճռելու համար լիազորված մարմինը (պաշտոնատար անձը) կարող է խախտողին ազատել վարչական պատասխանատվությունից և բավարարվել բանավոր դիտողությամբ:

Արարքի նվազ նշանակությունը գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել այն հանգամանքը, որ թեև ձևականորեն արարքը կարող է պարունակել «Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով» սահմանված արարքի հատկանիշներ, սակայն ֆիզիկական կամ իրավաբանական անձին, հասարակությանը, պետությանը այնպիսի էական վնաս չի պատճառվել, որի հիմքով սահմանված պատասխանատվությունը դիտարկվի համաչափ: Նվազ կարևորությունը կիրառելիս անհրաժեշտ է հաշվի առնել խախտման բնույթը, դրա որակական կողմը, ինչպես նաև խախտում թույլ տված անձի վերաբերմունքը խախտման նկատմամբ:

Հանձնաժողովն արձանագրում է, որ ՀՀ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 169.28 հոդվածը նպատակ է հետապնդում ապահովել պետական պաշտոն զբաղեցնող անձի (ինչպես նաև վերջինիս ընտանիքի անդամի) հանրային հաշվետվողականությունը, վերջինիս հանրային գործունեության նկատմամբ վստահությունը, պետական պաշտոն զբաղեցնող անձի (ինչպես նաև վերջինիս ընտանիքի անդամի) կոռուպցիոն ռիսկերից զերծ գործունեությունը:

Խախտման հիմքով պատասխանատվություն սահմանելու հարցը որոշելու համար Հանձնաժողովը գտնում է, որ անհրաժեշտ է ***յուրաքանչյուր գործով գնահատել***, թե արդյոք այդ խախտումը հանգեցրել է նորմով պաշտպանվող

352

իրավահարաբերությունների բուն էության խաթարմանը: Այս առնչությամբ էական է խախտման (արարքի) որակական կողմը:

Սույն գործով Հանձնաժողովն արձանագրում է, որ հայտարարատու պաշտոնատար անձի տարեկան հայտարարագրում ներկայացվել է Էդիտա Սերժիկի Ավետիսյանի վերաբերյալ տվյալը՝ որպես իր ընտանիքի կազմի մեջ մտնող չափահաս անձ, ինչը նշանակում է, որ Օրենքի 34-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանված իրավանորմի ուժով հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամը ևս հանդես է գալիս որպես Օրենքի պահանջներին համապատասխան հայտարարագիր նեկայացնելու պարտականություն ունեցող սուբյեկտ: Տվյալ դեպքում Էդիտա Սերժիկի Ավետիսյանը իր կողմից 30.05.2020 թվականին Հանձնաժողով ներկայացված տարեկան հայտարարագրի «Գ.1. Հայտարարատու պաշտոնատար անձի, նրա ընտանիքի անչափահաս անդամների և խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձանց եկամուտները» բաժնում հայտարարագրել է «ԹԻ ՍԻ ՌԻԵԼԹԻ» ՓԲԸ-ին վերաբերող տվյալ՝ նշելով որպես իր եկամուտի աղբյուր:

Այս առնչությամբ Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում նշել, որ տվյալ պարագայում հայտարարատու պաշտոնատար անձի կողմից իր ընտանիքի անդամի մասին հայտարարագրված տվյալի և այդպիսի տվյալ հետ փոխկապակցության մեջ գտնվող վերջինիս ընտանիքի անդամի կողմից հայտարարագրված տվյալով ըստ էության բացահայտված է պետական պաշտոն զբաղեցնող անձի հետ մերձավոր ազգակցությամբ կապված անձի՝ վերջինիս դրստեր Էդիտա Սերժիկի Ավետիսյանի առնչությունը «ԹԻ ՍԻ ՌԻԵԼԹԻ» ՓԲԸ-ին, որպիսի պայմաններում ուղենշվել է շահերի հայտարարագրման օրենսդրի կողմից սահմանված նպատակը: Այս կերպ գործնականում չի խաթարվել հանրային հաշվետվողականությունը, քանի որ յուրաքանչյուր դեպքում պետական պաշտոն զբաղեցնող անձի հայտարարագրերը թե Հանձնաժողովի կողմից համալիր վերլուծության, թե հանրության ուշադրությանն արժանանալու դեպքում, ուսումնասիրության առարկա են դառնում ընտանիքի անդամների հայտարարագրերում ներկայացված տվյալների համատեքստում:

358

Հաշվի առնելով վերոնշյալ հանգամանքները, Հանձնաժողովը գտնում է, որ ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի դատավոր Սերժիկ Ավետիսյանի կողմից կատարված խախտումը հանրային վտանգավորության տեսակետից ունի նվազ նշանակություն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 21-րդ հոդվածով, Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Սերժիկ Ավետիսյանին ազատել վարչական պատասխանատվությունից՝ հայտարարելով բանավոր դիտողություն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Սերժիկ Ավետիսյանին այն սահմանված կարգով հանձնելու (հանձնված համարվելու) հաջորդող օրվանից:
3. Որոշումն ուժի մեջ մտնելուց հետո Սերժիկ Ավետիսյանին տրամադրել եռօրյա ժամկետ՝ «Հայտարարատու պաշտոնատար անձի 2020 թվականի գույքի, եկամուտների և շահերի» հայտարարագրի համապատասխան բաժնում ուղղում կատարելու համար:
4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ ՀԱՅԿՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

353